

թէ ժէ. դարուն Հ. Պետրոս Փայիս փորթուգալցի Յիսուսեանը երթալով Հապէշիստան քարոզութեան, 1618 Ապրիլ 21ին կը հասնի Կոյամ նահանգը, հապէշինքնակալին մօտ, որ հոն բանակեցուցած էր իր զօրքը, տեսաւ իր աչքով Նեղոսի ակունքը, որ ըստ իրեն երկու բոլորածէ Զրհորներ էին, մին՝ արեւելեան կողմը, միւսը՝ արեւմտեան, իրր քարընկէց մը հեռու իրարմէ: Անոնց միջին տրամագիծն է չորս բթաչափ, լերան մը վրայ, որուն գագաթը տափարակ է լայնածաւալ դաշտի մը նման և շրջապատուած բարձրաբերձ ուրիշ լեռներով, արեւմտեան կողմն Կոյամի մերձ Սաղալի գիւղին, այն վիճակին մէջ, զոր կը կոչեն Անկուս կամ Երկիր Անկուսաց՝ տեղւոյն բնակիչներուն անունով:

Բայց ջուրը այդ Զրհորներուն բերանէն չի բխիր, այլ խորասուզուելով վար՝ լերան ստորոտէն կ'ելլէ:

Տեղւոյն բնակիչները կ'ըսեն, թէ այդ լեռը ամբողջ շտեմարան մըն է ի ջրով, զոր անթիւ ծառերու արմատները իրարու փաթթուելով կը պահեն հաստատուն, ուստի այդ լերան գլուխը առ հասարակ կը շարժի և կը դողայ երկիրը ոտքերու տակ (Հ.Մտեփաննոս Գիւլէր Ագոնց. Աշխարհագրութիւն Զորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ եւ Աֆրիկիոյ եւ Ամերիկոյ, 1802, մասն Երրորդ. Ափրիկէ, էջ 23-27):

Որքան կ'երեւի այս նկարագրութենէն, Յիսուսեան այդ քահանան կեղծիք մը ի գործ դրած է բոլորովին շինծու մէկ նկարագրութիւնը տալով Նեղոսի ակերուն, իր ճամբորդութիւնը հետաքրքրական ընծայելու համար. կեղծիք մը՝ զոր շատ անգամ գործադրած են եւրոպացի ուղեւորներ:

Նեղոսի ակը առաջին անգամ գտած կամ տե-